- Պետք է փաստաբանին տեղեկացնել, եթե առկա են փաստաթղթեր և ապացույցներ, որոնք ցանկանում եք տրամադրել Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը՝ Ձեր ապաստանի դիմումը հիմնավորելու համար:
- Պետական մարմիններից Ձեր ապաստանի գործի առնչությամբ ցանկացած փաստաթուղթ ստանալու դեպքում տեղյակ պահեք Ձեր փաստաբանին:
- Ապաստանի դիմումի վերաբերյալ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության որոշումը ստանալուց հետո **անհապաղ** տեղյակ պահեք Ձեր փաստաբանին, քանի որ այն դատարան բողոքարկելու համար առկա են Օրենքով սահմանված **խիստ ժամկետներ** (եթե Միգրացիայի և քաղաքացիության ծառայության որոշումը Ձեր օգտին չէ):
- Փաստաբանը պետք է ուսումնասիրի որոշումը և Ձեզ հետ քննարկի այն բողոքարկելու անհրաժեշտությունը և հիմքերը, օրինակ՝ ապաստանի ընթացակարգում թույլ են տրվել բացթողումներ, որոնք կարող էին ազդած լինել որոշման վրա, կամ որոշումը պատշաճ կերպով հիմնավորված չէ, Ձեր կողմից ներկայացված տեղեկությունները/ապացույցները պատշաճ կերպով հաշվի չեն առնվել և այլն:
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության բացասական որոշման դեմ դատարան բողոք ներկայացնելու դեպքում փաստաբանի հետ պետք է քննարկեք դատավարությանը Ձեր մասնակցության հետ կապված հարցերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ/ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու անհրաժեշտությունը:
- Դատարանի որոշումն ուղարկվելու է Ձեզ կամ Ձեր փաստաբանին, ով Ձեզ պետք է տեղեկացնի դատարանի որոշման և դրա բողոքարկման ժամկետների մասին (եթե այն Ձեր օգտին չէ):
- Փաստաբանն առանց Ձեր իմացության որևէ որոշում ՉԻ ԿԱՐՈՂ կայացնել: Դուք համատեղ եք որոշում ձեր բոլոր գործողությունները:
- Փաստաբանը պարտավոր է պահպանել փաստաբանական գաղտնիքը և իրավունք չունի առանց Ձեր համաձայնության այլ անձանց հետ կիսվել Ձեր հայտնած տվյալներով:
- Կարևոր է, որ Դուք վստահեք Ձեր փաստաբանին և Ձեր գործի հետ կապված ամբողջական ու մանրամասն տեղեկություններ տրամադրեք:
- Դուք ունեք իրավունք ցանկացած ժամանակ Ձեր փաստաբանի հետ առանձին տեսակցելու:
- Եթե կարծում եք, որ փաստաբանը պատշաճ կերպով չի կատարում իր պարտականությունները, ապա անհրաժեշտ է գրավոր բողոք ներկայացնել Փաստաբանների պալատի նախագահին (կոնտակտային տվյալները առկա են ստորև):



- Բողոքը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, որտեղ պետք է շարադրել բողոքի հիմքում ընկած բոլոր փաստերը:
- Բողոքի ընթացքի և արդյունքների մասին կարող եք տեղեկանալ կապ հաստատելով Փաստաբանների պալատի հետ:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գրավոր դիմումի ձևը

Հայաստանի հանրապետության
փաստաբանների պալատի հանրային
պաշտպանի գրասենյակի ղեկավարին

Հայաստանի հանրապետությունում ապաստան հայցող

Անուն ....

Ազգանուն ....-ից

Դիմում

Խնդրում եմ ինձ հանրային պաշտպան տրամադրել ապաստանի ընթացակարգերում ինձ ներկայացնելու և խորհրդատվություն տրամադրելու համար:

Կից ներկայացնում եմ իմ՝ Հայաստանում ապաստան հայցողի անձը հաստատող փաստաթուղթը:

Ամսաթիվ........................ Ստորագրություն...........................

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի հանրային պաշտպանի գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան փ., 7-2 շենք, 2-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 60 07 14 / +374 33 60 07 14
Էլ-փոստ՝ pashtpan@advocates.am
Կայք՝ www.hpg.am

Հայաստանի մարզերում Հանրային պաշտպանի գրասենյակի հասցեների մասին տեղեկություններ ստանալու համար այցելեք այս կայքէջը՝ https://www.hpg.am/am/site/Seats կամ զանգահարեք Հանրային պաշտպանի գրասենյակ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան փ., 7-2 շենք, 4-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 60 07 01, +374 10 60 07 04
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով
գերագույն հանձնակատարի գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պետրոս Ադամյան փ. 14
Թեժ գիծ՝ 08000 0025
Էլ-փոստ՝ armyeprt@unhcr.org
Կայք՝ https://help.unhcr.org/armenia/

Funded by the European Union
ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

UNHCR
The UN Refugee Agency

Սույն տեղեկատվական նյութը մշակվել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից՝ Եվրոպական միության (ԵՄ) և ՄԱԿ ՓԳՀ ֆինանսական օժանդակությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու է բացառապես նյութի հեղինակը, և բովանդակությունը կարող է չարտացոլել ԵՄ և ՄԱԿ ՓԳՀ տեսակետները:

ARM

Անվճար իրավաբանական օգնությունը Հայաստանում ապաստանի տրամադրման ընթացակարգում



https://help.unhcr.org/armenia/

Եթե Ձեզ համար վտանգավոր է վերադառնալ Ձեր երկիր, ապա Ձեզ համար հասանելի է ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնություն, որը կուղղորդի Ձեզ Հայաստանում ապաստանի տրամադրման ընթացակարգի հետ առնչվող բոլոր հարցերում և կպաշտպանի Ձեր իրավունքները:

Ե՞րբ և ինչպե՞ս է հասանելի ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնությունը

- ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնությունից կարող եք օգտվել ինչպես ապաստանի դիմում ներկայացնելու նպատակով, այնպես էլ ապաստանի դիմումի քննության ամբողջ ընթացքում:
- Պետության կողմից երաշխավորված ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնություն ստանալու համար կարող եք օգտվել Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայություններից:
- Հանրային պաշտպանի գրասենյակը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնություն է տրամադրում որպես հանրային պաշտպան հանդես եկող փաստաբանների միջոցով:

- ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Հանրային պաշտպանի գրասենյակ[1]՝ կամ անձամբ ներկայանալով գրասենյակ կամ կից դիմումի նմանությամբ գրավոր դիմումը փոստով ուղարկելով գրասենյակին:
- Հանրային պաշտպանի գրասենյակը Ձեզ համար կնշանակի փաստաբան, որը Ձեզ կտրամադրի ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնություն ապաստանի ողջ ընթացքում:
- Հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու հարցում կարող եք օգնություն խնդրել այն պետական մարմնի աշխատակցից, ով զբաղվում է Ձեր գործով, ինչպես օրինակ՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, ոստիկանության, սահմանապահ զորքերի, կալանավայրի աշխատակիցը կամ քննիչը:
- Ձեր գործով զբաղվող պետական մարմնի աշխատակիցը Ձեզ կտեղեկացնի նաև տվյալ պահին ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրող այլ կազմակերպությունների մասին:
- Հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու դեպքում Ձեզ համար հնարավորության դեպքում կապահովվի ԱՆՎՃԱՐ թարգմանություն:

Ինչու՞ ստանալ իրավաբանական օգնություն

Դիմեք իրավաբանական օգնություն ստանալու համար ապաստանի ընթացակարգի հնարավորինս վաղ փուլում, քանի որ այդ դեպքում՝

- Ձեր իրավունքները կլինեն առավել պաշտպանված.
- Ավելի լավ կպատկերացնեք ապաստանի ընթացակարգը և թե ինչ է ակնկալվում Ձեզնից.
- Կստանաք օգնություն ապաստանի Ձեր դիմումը հիմնավորող ապացույցների հավաքագրման և դրանց ներկայացման հարցում.
- Ավելի պատրաստված հանդես կգաք Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Ձեզ հետ անցկացվող հարցազրույցին.
- Առավել տեղեկացված կլինեք օրենսդրությամբ սահմանված պահանջներից և ժամկետներից և առավել հեշտությամբ կպահպանեք դրանք.
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Ձեր ապաստանի դիմումի մերժման դեպքում առավել արդունավետ կերպով կկարողանաք որոշումը բողոքարկել դատարանում:

Ո՞րն է փաստաբանի դերը ապաստանի ընթացակարգում

- Փաստաբանը միջոցներ է ձեռնարկում բոլոր պետական մարմինների կողմից Ձեր իրավունքների հարգման ուղղությամբ, այդ թվում՝ որպեսզի որպես ապաստան հայցող Դուք պաշտպանված լինեք Ձեր երկիր հարկադիր վերադարձից (չվերադարձելիության սկզբունք):
- Փաստաբանը հետևում է, որպեսզի բոլոր ընթացակարգերը իրականացվեն օրենքին համապատասխան, պաշտպանում է Ձեր իրավունքներն ու շահերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է Ձեզ տարբեր պետական մարմիններում և դատարանում, հետևում է, որպեսզի պահպանվեն օրենքով սահմանված պահանջները և ժամկետները:
- Փաստաբանը խորհրդատվություն է տրամադրում Ձեզ ապաստանի վարույթի տարբեր փուլերի, Ձեր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև Ձեր համատեղ քայլերի վերաբերյալ: Փաստաբանը կարող է նաև օգնել Ձեզ պատրաստվել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Ձեզ հետ անցկացվող հարցազրույցին:
- Փաստաբանը օգնում է Ձեզ ապաստանի գործը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ձեռք բերելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու հարցում:
- Փաստաբանը կարող է ներկա գտնվել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Ձեզ հետ անցկացվող հարցազրույցին՝ օգնելով, որպեսզի Ձեր ապաստանի հայցի վերաբերյալ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացվի հարցազրուցավարին և հետևելով, որ Ձեր շահերն ու իրավունքները պաշտպանված լինեն:

- Եթե փաստաբանը չի մասնակցել հարցազրույցին, ապա նա կարող է ծանոթանալ դրա արդյունքներին (հարցազրույցի արձանագրությանը)՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում Ձեր գործին հասանելիություն ստանալով:
- Փաստաբանը կարող է դիմում ներկայացնել Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը, եթե հարցազրույցի արձանագրությանը ծանոթանալուց հետո առաջացել է ուղղումներ կամ ճշգրտումներ կատարելու, նոր տեղեկություն կամ ապացույց ներկայացնելու անհրաժեշտություն:
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Ձեր ապաստանի գործով որոշում կայացնելուց հետո փաստաբանը ծանոթանում է որոշմանը, բացատրում է այն Ձեզ և Ձեզ հետ քննարկում է հետագա քայլերը:
- Եթե Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը մերժել է Ձեր ապաստանի դիմումը և Դուք համաձայն չեք դրա հետ, փաստաբանը օգնում է Ձեզ բողոքարկել որոշումը դատարանում (ներառյալ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, ըստ անհրաժեշտության) և ներկայացնում է Ձեր շահերը դատարանում:
- Եթե ձեր ապաստանի դիմումը վերջնականապես մերժվում է Հայաստանում, կարող եք ձեր փաստաբանի հետ քննարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարան բողոք ներկայացնելու հնարավորությունը:

Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ փաստաբանի հետ փոխհարաբերություններում

- Փաստաբանի հետ պետք է փոխանակվել կոնտակտային տվյալներով՝ հետագայում կապ հաստատելու հնարավորություն ունենալու համար: Անհապաղ տեղյակ պահեք փաստաբանին Ձեր կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:
- Ձեր ապաստանի գործով հարցազրույցի օրվա մասին պետք է տեղյակ պահել փաստաբանին և նրա հետ միասին պատրաստվել հարցազրույցին:

[1] *Կոնտակտային տվյալները առկա են սույն թերթիկում:*